




ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ  
Վ Ա Ր Դ Ա Ն Ա Ն Ց Ա Ս Պ Ե Տ Ն Ե Ր Ի Ն՝  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԻՍՆԱՄՅԱԿԻ ԱՌԹՎ

Վ Ա Զ Գ Է Ն Ծ Ա Ռ Ա Յ Յ Ի Ս ՈՒ Ս Ի Զ Ր Ի Ս Տ Ո Ս Ի,  
ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ  
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ,  
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԶ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ  
ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ  
ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷԶՄԻԱԾՆԻ

ՊԱՏՈՒԱՐԺԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ, ՅԱՐԳԱՐԺԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹԵԱՆ  
ԵՒ ՀԱՄԱՅՆ ԵԿԵՂԵՑԱԾԷՆ ԵՒ ՀԱՅՐԵՆԱՆՈՒԷՐ ԱՆԴԱՄՈՑ  
ՎԱՐԴԱՆԱՆՑ ԱՍՊԵՏԱՅ, ՀԱՐԱԶԱՏ ՈՐԴԻՈՑ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ,  
Ի ԳԱՀԷ ՍՐԲՈՅ ՀՕՐՆ ՄԵՐՈՅ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱԽՈՐԶԻ  
ԵՒ Ի ԳԱՀԱԿԱԼԷ ՆՈՐԻՆ ՈՂԶՈ՛ՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Յոյժ նշանակալից է և յուզիչ, որ մեր ազգի նահատակութեան իսկ օրերուն, 1916-ի գարնան, Ատլանտեանի հեռաւոր ափերուն վրայ, ծնունդ առած է և կազմակերպուիլ սկսած Զեր եղբայրութիւնը, Վարդանանց սուրբ անունով:

Յառնած հալ ժողովուրդի ահաւոր տառապանքներու յորձանքներէն, մեռնելով իսկ ապրելու՝ անոր հաւատքով ոգեշնչուած, գոյատևելու և ստեղծագործելու անոր արքազան տենդով գոտեպնդուած և այսօր Հայոց աշխարհի նոր կեանքի արևով լուսաւորուած, Դուք, Վարդանանց ապետներդ, ահա յիսուն տարիներ շարունակ ապրեցաք, երազեցիք ու տքնեցաք՝ կենդանի և շէն պահելու համար հայոց ազգը և անոր Ս. Եկեղեցին օտար հորիզոններու տակ:

Այսօր, Ձեր յիսնամեայ կեանքի սեմին, Մենք կ'ողջունենք և կ'օրհնենք Ձեր կազմակերպությունը և Ձեր վաստակը ու կը մաղթենք, որ Տիրոջ օգնությամբ Դուք շարունակեք Ձեր առաքելությունը Սփիւռքի հայության ամբողջ տարածքին վրայ, նոյն սրբազան ոգիով, նոյն նուիրումով և լաւատեսությամբ, բայց և արդի հայ կեանքի կենսական հարցերու և պայմաններու գիտակցությամբ:


Մենք կը հաւատանք, թէ Ձեր միությունը մեր օրերուն կոչուած է վերածուելու եկեղեցաշէն և հայրենասէր շարժման մը, համազգային մակարդակի վրայ:

Հայոց պատմութեան ներկայ շրջանի աւագ խնդիրներէն մէկն է՝ կենսունակ ու անաղարտ պահել արտերկրի մեր պանդուխտ ժողովուրդի հայկական հոգին և մէկ ու անբաժան՝ Հայաստանեայց Ս. Եկեղեցին՝ կեանքի աիշ և հոգիի լոյս ստանալով վերածնունդ մայր Երկրի ակունքներէն:

Ս. Էջմիածնէն օրհնութիւն Ձեզի և յաջողութիւն Ձեր գործին:

«Աստուած յուսոյ լի արասցէ զձեզ ամենայն խնդրեամբ և խաղաղութեամբ, առաւելոյ ձեզ յուսով՝ զօրութեամբ Հոգւոյն Սրբոյ» (Հռոմ. ԺԵ 13):

Ամէն:



ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 21-ն մայիսի  
1966 Փրկչական ամի,  
և ի տունարիս Հայոց ՌՆԺԵ,  
ի մայրաւանս Սրբոյ Էջմիածնի:

